



*ՋՐԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԲԵՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ*

Վահագն Տոնոյան, Ջրերի կառավարման փորձագետ

Հայաստանի ջրային ոլորտում ազգային
քաղաքականության երկխոսության ղեկավար
հանձնախմբի 14-րդ հանդիպում

Դեկտեմբերի 14, 2015թ.
Հայաստան, Երևան



ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

- Հայաստանում ջրի նվազ առկայություն, սեզոնային խիստ դեֆիցիտ և ջրային էկոհամակարգերի վրա բացասական ազդեցություն,
- Ջրապահանջի կառավարում և ջրային ռեսուրսների արդյունավետ բաշխում մրցակցային ջրօգտագործողների միջև՝ որպես տնտեսական աճի նախապայման,
- Ջրի որակի պահպանություն,
- Ջրի արժեքը (օգտագործելու և չօգտագործելու դեպքում)՝ որպես էական բաղադրիչ ջրի գնագոյացմանն աջակցելու համար,
- Ջուրն ունի բնապահպանական և տնտեսական արժեք, երբ այն օգտագործվում է և նույնիսկ երբ չի օգտագործվում (ՀՀ Ջրային օրենսգրքի հոդված 5),
- Ներկայումս այդ սկզբունքն ամբողջովին չի կիրառվում՝ Հայաստանում ջրի բնապահպանական և տնտեսական արժեքի վերաբերյալ անբավարար տվյալների պատճառով



ՋՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

- Ուղղակի օգտագործման արժեք (օգուտներ, որոնք ուղղակի ստացվում են ջուր սպառողների, տնտեսական ոլորտների և ռեկրեացիոն ջրօգտագործողների կողմից),
- Անուղղակի օգտագործման արժեք (մարդիկ անուղղակի օգտվում են ջրային ռեսուրսներից և ջրային էկոհամակարգերից, ներառյալ ՀԵԿ-երի կողմից ոչ սպառողական ջրօգտագործումները)
- Չօգտագործման արժեք (մարդիկ գիտեն որ ներկայում և ապագայում գոյություն կունենա լավ էկոլոգիական կարգավիճակ ունեցող ջրային էկոհամակարգ)



ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

- Ջրի արժեքի գնահատման միջազգային մոտեցումների վերլուծություն
– Ջրի արժեքի գաղափարը և սահմանումը,
– Ջրի արժեքի գնահատման միջազգային մոտեցումները
- Առկա մոտեցումների կիրառելիությունը Հայաստանում
– Հայաստանի համար ամենակիրառելի մեթոդի բացահայտում,
– Մոտեցման փորձարկում ընտրված գետավազանում կամ ջրօգտագործման ընտրված ոլորտի համար
- Վերջանական հաշվետվություն
– Գործնական կիրառման արդյունքները,
– Ջրի տնտեսական արժեքի վերաբերյալ հետագա աշխատանքների անհրաժեշտությունը որոշում կայացնողների համար



ՀԻՄՆԱԿԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ջրի բաշխման արդյունավետությունն (Ջրային օրենսգրքի հոդված 76),
- Ջրի պատշաճ գնագոյացում (Ջրային օրենսգրքի հոդված 76),
- Բնապահպանական գործոնների քննարկում և ընդգրկում (Ջրային օրենսգրքի հոդված 5)